

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների արդի պատմության, ներքին և արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը տասնամյակներ շարունակ եղել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հետազոտական աշխատանքների կարևոր ոլորտը: Ստեղծվել է պատկառելի քանակ կազմող տարաբնույթ գրականություն, ձևավորվել են հարուստ ավանդույթներ:

Այսօր էլ ինստիտուտում աշխատում են մի շարք բարձրակարգ մասնագետներ, որոնք հաջողությամբ շարունակում են ՀՀ հարակից երկրների ժամանակակից քաղաքականության համակողմանի հետազոտումը: Նրանց աշխատությունները հիմք են հանդիսանալու սույն մատենաշարի համար: Անտարակույս, կիրավիրվեն նաև մասնագետներ ինչպես Հայաստանի այլ գիտական կենտրոններից, այնպես էլ արտերկրից:

Հետագայում նախատեսվում է ընդլայնել հրատարակվող հետազոտությունների և աշխարհագրական շրջանակները, և արձարծվող խնդիրների ու թեմաների ընդգրկումը, ինչը հնարավորություն կտա դիտարկելու և վերլուծելու գործընթացները եվրասիական համատեքստում երևանակենտրոն տեսանկյունից: